


ՊԱՅՄԱՆՔ

Ցարական գին Կ. Պոլսոյ 40 Մէճ.
Պաշտպանութեան 2 խորան
Վեցամս. Կ. Պոլսոյ 3 Մէճ.
Պաշտպանութեան 1 խորան
Օտար երկիրներու 50 Պոլ.
Մանուկներու տուր մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուշ Կ. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
այ :
Իւրաքանչիւր թիւ 40 փարս արծ :



ԼԵՐԱՔԻՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց ճանրու-
ած թիւը խորագրութեան վրայ է :
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խորագրի
— ճիշդ չի պիտի ուղղուի, Ղալա-
թիա Սանտրոքըլար Ճաւաղատի թիւ
198, Նորո խան, Մասիսի գրասեն-
եակը :
Ճանրու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :
Չտպուած նամակ, յոգնուած, և
ետ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 8 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Թուրքիոյ սահմանակից փոքր իշ-
խանութիւնը կը շարժին, և իւրա-
քանչիւր իւր աշխարհայ աշխարհա-
վարութիւնը ծրագրելու ջանք կընէ :
Բայց պէտք է յարել, որ բայց ի Ռու-
սիայէն, երկու Ուլալ իշխանու-
թիւնը որոշապէս դէպ ի Ռուսիա կը
միտին : Իրենց կեդրոնն է Սլաւիան
միութիւնը, բայց իրարու հետ ևս
յարաբերութիւններ կը հաստատեն :
և Յունաստան, որ իւր բաղձանքին
իրագործութիւնը գիտարութեան
հանդիպած կը տեսնէ, կը փութայ
Գարատաղի հետ բարեկամութիւն
հաստատել : Եւրոպայի Հիւսիսեան
հիւսիսային Պ. Մալթոսի իշխանի մը
թագաւորէն ինքնագիր նամակ մը
տարաւ Գարատաղի իշխանին : Այն
նամակը նպատակ ունի եղբւր երկու
կողման մէջ համաձայնութիւն հաս-
տատել : Աթէնքի մէջ Գարատաղի
հետ դաշնակցութեան փափաքներ
կան, որք այս կարծեաց վրայ կը յե-
նուն թէ անոր և Յունաստանի հա-
ւասարակցութեան իշխանի են Ալպանիա-
ցիք : Պ. Մալթոսի իշխան Գարատաղի
արտաքին գործոց նախարարին հետ
խօսակցելով՝ Ալպանիացեաց պատե-
րաբանէր զիտուածներէն Գարատաղի
և Յունաստանի համար տալագային
մէջ ծագելիք վտանգները ցոյց տուեր
է, իսկ Գարատաղի նախարար Պ.
Ռատոնիք ծանուցեր է թէ իւր կա-
ռավարութիւնն հսկողութիւն կընէ
վերին Ալպանիոյ վրայ, և միշտ զգու-
շութեան միջոցներ ձեռք կառնու-
թէ առ այժմ Գարատաղի համար
վտանգ մը չտեսնուիր, և իշխանը կը
յուսայ որ խաղաղութիւնը կամրա-
պընդի և իւր նոր առած երկիրները
կազմակերպելու ժամանակ կունենայ :
Բայց որովհետեւ Յունաստան ինքնիշ-
խան գործը մը բռնեց և վերջին յե-
ղաշրջմանց մէջ Ռուսիոյ աշխարհա-
վարութեան արբանեակ չլինելով՝ Ու-
րուսիան տէրութեանց խրատին հե-
տեցեալ, և նոյն իսկ Թուրքիոյ դաշ-
նակցութեան համակիր եղաւ Սլաւաց
միութեանը զիմադրելու համար,
Բեդրասպուրի մէջ իւր համարումը
կորոյս, և Սլաւք՝ որ Ռուսիոյ կամաց
կը հնազանդին, հիւսիսեանութեան
նպատակաւ չեն իրենց բնական բեր-
ւածքը Զարմանալի չէ ուրեմն որ Յու-
նաստան Գարատաղի կողմէն պիտու-
նական բարեկամութեան ապահովու-
թիւններ միայն ստացած լինի :

Իսկ Գարատաղի իրեն հաւատարմի
դաշնակից Ռուսիոյ Բեդրասպուրէն
սպայներ բերած է՝ իւր աշխարհացոյց
ապրտակն ու սահմանները գծելու

և իւր ամրութեանց յատակադիծը
պարտաւորութեան համար : Սահմանաց
ուղղութեան խնդրոյն վրայ դիտա-
րութիւններ ծագելը ծանուցած է-
ինք. բայց Լոպանով իշխանին մէկ
հեռագիրը կըսէ թէ Բ. Դուռը մեծ
տէրութեանց կարծիքն ընդունելու է,
որք թաթալ անուն իրան մը Գարա-
տաղի մնալուն համար որոշում տը-
ւած էին, և թէ սահմանները գծելու
պաշտօն ունեցող միջադպային յանձ-
նախումբն Եւրոպայէն պիտի մեկնի
եղբւր՝ ընդ վրայ իւր գործը շարու-
նակելու : Նիքիթա իշխանը կը պատ-
րաստուէր Բոսնիոյցա և ուրիշ նոր
առնուած տեղերն ուղեորութիւն մը
ներ ուր տեղական պիտոյքը քննելով
աղատական բարեկորդութեան պիտի
ընէ եղբւր : Սերվիոյ իշխանն արդէն
ժամանակէ մ'ի վեր Նիշ նստած է,
և նոր ձեռք բերած տեղերը կը կազ-
մակերպէ : Սլաւիանացիք քանի մ'ան-
գամ յարձակումներ ըրին նոր սահ-
մանաց վրայ, սակայն Սերվիա մէկ
կողմէ զօրքով վանեց զանոնք, միւս
կողմէ Բ. Դուռն քով աղբու յայտա-
րարութիւններ ըրաւ, և երկուստեք
ձեռք առնուած միջոցներն այժմ այն-
կողմը բաւական խաղաղեցուցած
կերելին թաշրճայի Միւլթիմի, որ Ալ-
պանիացիները կը գրգռէր Աւստրիոյ
դէմ, ձեռքադրուել է, ինչպէս նաև
ուրիշ քանի մը զիլաւոր գրգռիչներ,
և Ալպանիոյ յուզմունքը Մէհմետ Ս-
լի փաշայի սպանման ժամանակին չափ
սաստիկ չէ :

Եթէ Հիւսիսեան խնդիրը վեր-
ջանայ, կընամը այն ատեն համե-
մատաբար հանդարտ ժամանակի մը
հասնիլ : Վերջին պատերազմին յա-
րուցած կիւքերը մեղմանալու վրայ
են. բայց Հիւսիսեան խնդիրը կըը-
նայ տակաւին տաղանդալից ժամեր
բերել : Վեճին կարեւորագոյն կէտը
Եաննայի վրայ կեդրոնացած է, և
Հիւսիսեան ոչ միայն աշխարհավարու-
թեամբ, բանակցութեամբ և բողոք-
ներով կը ջանան զայն՝ Հիւսիսեան
հող ընել, այլ և Եւրոպիոյ մէջ իրենց
նպատակաւ հրատարակութիւններ
ընել կուտան : Գերմանիոյ ամենէն
անուանի աշխարհագէտը՝ Պ. Գիէ-
բերթ՝ յօդուած մը գրելով կը հաս-
տատէ թէ Եաննա Հիւսիսեան քա-
ղաք մ'է : Այս նիւթը սլաւոպանուե-
ցաւ նաև Սերվիական անուանի ամա-
թիւններուն մէջ : Հիւսիսեան սպա-
յակոյտին անդամներէն մին աշխար-
հացոյց տալտակ մը գծեց՝ Պէրլինի
վերահսկողին Յունաստանին առած
սահմանները ցուցնող, որոյ մէջ է նա-
և Եաննա : Յառաջիկայ բանակցու-
թեանց մէջ Եաննայի խնդիրը մեծ
տեղ մը պիտի բռնէ, և նայինք ո՛ւր
պիտի յանդի :

Հեռագիրն արդէն ծանուց թէ Ե-
դիպտոսի խտիվն իւրապական տէրու-
թեանց հաւաքական բողոքին վրայ
իւր ապրիլ 22 ի հրամանագիրն ետ
առած էր : Եւրոպական լրագիրը
Գերմանիոյ բողոքագրին պատճէնը կը
հրատարակեն, որուն հաւանութիւն
տուած են միւս տէրութիւնք : Բո-
ղոքագիրը կըսէ. « Գերմանիոյ կայ-
սերական կառավարութիւնն, ապրիլ
22 ի հրամանագրին մէջ, որով Եդիպ-
տական կառավարութիւնը պարտուց
ինդիւրը Թերի կերպիւ կը կարգադ-
րէ և ծանուցեալ իրաւունքները կը
ընէ, դատարանաց բարենորոգման
ժամանակ կըքեալ միջադպային պար-
տակաւութեանց յայտնի և մեծ բռ-
նաբարումը տեսնելով, ինքզինք հար-
կադրեալ կը նկատէ այդ հրամանա-
գրին վրայ դատական բնաւ զօրու-
թիւն չհանելու խառն դատարանաց
ձեռնհասութեան և Գերմանացի քա-
ղաքացոց իրաւանց տեսակէտով, և
զիտխաղայն պատասխանատու կը
համարի՝ օրինաց հակառակ ընթա-
ցից բոլոր հետեւանքներուն համար »

Բայց կերելի թէ խնդիրն Եդիպ-
տոսի խտիվն իւր հրամանագիրն
ետ առնելով չպիտի վերջանայ, ու-
րովհետեւ երէկ եկած Ռիւթերի հե-
ռագիր մը կը ծանուցանէ թէ Եդիպ-
տոսի Գաղղիական ընդհանուր հիւ-
պատու և զեռպանական գործակա-
տար Պ. Թերբու իմաց տուեր է իւր
տիվին թէ Գաղղիական կառավարու-
թիւնն որոշած է Եւրոպական նախա-
րարաց անուանման վրայ պիտի, և
Եթէ մերժողական պատասխան տրը-
ւի, խտիվն պաշտօնականութիւնը պա-
հանջել :

Եթէ այս լուրն ստոյգ է, Եդիպ-
տոսի խնդիրն օր քան զօր կընճոտե-
լու՝ բայց և միանգամայն որ և է կեր-
պիւ լուծման մը մօտենալու վրայ է :

Ալքեքանդր կայսեր որոշմամբ,
որ մայիս 29 թուով Ռուսիոյ պատե-
րազմական նախարարութեան կողմա-
նէ հրատարակեցաւ, կարսի ամրոց
ներուն Օսմանեան անունները փոխ-
ւելով Ռուսական անուններ տրուած
են : Գլխաւոր ամրոցներէն Վէլի փա-
շա անուն ամրոցն՝ Ալքեքանդր Բ.
կայսր անունեցաւ. միջնաբերդը՝
Միքայէլ Մեծ դուռ. ինկիլիք թապ-
եա կոչուած մարտկոցը՝ Սիւրաթօփը
Միքայի իշխան : Չաքմադ թապեան
կոմս Լորիս Մէլիքով. Գանլը թապ-
եան՝ Լաղարէֆ զորավար : Սիւրաթի
թապեան՝ Մէլիքով իշխան : Հաֆըզ
փաշա թապեան՝ Ալիազով զորավար.
Գարատաղ թապեան՝ Ֆատէյեֆ զ-
րավար : Տիք—Թէփէ թապեան՝ Բօօփ
զորավար : Մնացած 11 կտոր մարտ-
կացներուն ալ կարսի առման ժամա-
նակ նշանաւոր հանդիսացող ուրիշ

Ռուս զորավարաց և զնդապետաց
անունները տրուած են :

Պէրլինէն որոշած տեղեկութեանց
նայելով, Պոսնիացեաց ծանուցեալ
յիշատակելի կը խնդրէ եղբւր որ
Աւստրիական դրաւումը դադրի և
Պոսնիոյ ու Հէրսէքի մէջ միջադպային
առժամանակեայ վարչութիւն մը հաս-
տատի՝ Արեւելեան Ռումելիի վարչու-
թեան նման, որոյ նպատակը լինի
Պոսնիացեաց համար ինքնօրինական
վարչութիւն մը պատրաստել : Բայց
Պէրլինի մէջ կարեւորութիւն չէ տրը-
ուեր այս յիշատակագիրն և կուսակ-
ցութեան մը մեքենայութեանց պը-
տուղ համարուել է, որ իւր վա-
ռասիրութիւնն յադեցնելու համար
Պոսնիոյ նահանգը նորէն անկարգու-
թեան ու անխիտանութեան մէջ ըն-
կողմել կուզէ : Արդարեւ, այս հետա-
քըրքական յիշատակագիրը չլիշեր
իսկ թէ խնդրուած միջադպային վար-
չութեան ոյժ տալու համար պէտք
եղած զօրքն ո՛ր տէրութիւնը պիտի
տայ, այլ կուզէ որ խառն յանձնարմը
բին միայն աղբեցութեամբ բարե-
կարգութիւնն ու խաղաղութիւնը տը-
րէ Պոսնիոյ և Հէրսէքի մէջ : Այս ալ
խեղճի գէմ կերելի :

Աւստրիական կառավարութիւնն
անցեալներն իմաց տուած էր Բ. Դը-
րան թէ Պոսնիոյ և Հէրսէքի այլ և
այլ միջերանոցներուն մէջ զտնուած
կամ առանց կուռի անձնատուր եղող
զինուորականներէն առնուած զեն-
քերն Օսմանեան կառավարութեան
վերադարձնելու համար զինուորա-
կան պաշտօնատարներ նշանակած է :
Հետեւեալ կը խնդրէ որ Բ. Դուռը
զանոնք ստանալու համար պատուի-
րակներ անուանէ : Բ. Դուռը ժամա-
նակ մը վարանելէ ետեւ՝ վերջապէս
անուանեց պատուիրակներն, որք ի
մօտոյ Պոսնա և Հէրսէք պիտի եր-
թան յիշեալ զենքերն ընդունելու :
Կըսուի թէ յանձնարարութեան արտօնու-
թիւն պիտի ունենայ նաև Նօվի—պա-
զարի դաւառին Աւստրո—թուրքական
պայմանագրութեան մէջ յիշուած
կէտերուն խառն դրաւման պարա-
գայները կարգադրելու :

Թէրճէմանը Հօգըդաթ լրագիրը
կը ծանուցանէ թէ ոստիկանութեան
նախարարութեան յատկացեալ տա-
րեկան դուրմարն, որ 1 միլիոն 932,443
ոսկի էր, նոր պիւնտէին մէջ 900
ոսկի իշխէ :

Յիշեալ լրագիրը կըսէ թէ այս
վերջին դուրմար բաւական է, ըստ
որում տէրութեան երկիրներուն մէկ
մեծ մասն ուրիշներուն անցած է :
Բայց Թուրք լրագիրը յիշեալ անշուշտ
թէ՝ ոստիկանութեան զօրաց նուա-
զութեան պտուղատու Միտոպոլի

և մանաւանդ Հայաստանի քանի մը գաւառներն անսպառնալիք մնացած են աւազակայաց առջև :

Բարեբաղդաբար միւս թուրք լրագիրք Թէրքէմանը Հաղթաթի կարծիքէն չեն : Ճէրիտէի Հալա-տիս կը ընէ թէ ոստիկանութեան յատկացեալ գումարին նուազումը շատ գէշ հետեւանքներ պիտի ունե-նայ երկրին ապահովութեանն ու շա-հուց համար :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Աղէքսանդրիա 19 յունիս.
Գաղղիոյ դեսպանական գործակալտար Պ. Թրքեռու իշխանութենէ հրաժարելու խորհուրդ կուտայ Խաիվին :

Լոնտոն 19 յունիս.
Թայմս լրագիրը կը ընէ թէ Հիւրթեր որ Գաղղիա Եգիպտական խնդրոյն նկատ-մամբ որ և է բան մ'ըրած ինի առանց Անգլիոյ հետ կանխաւ խորհրդակցու-թեան : Եթէ ընթացք մ'ըրած է, կ'եզ-րակացնէ Թայմս, խնդրը ծանր կերպա-րանք մ'առած է :

Պէրլին 19 յունիս.
Գերմանիոյ և Ռուսիոյ կայսերը տե-տակցութիւն մը պիտի ունենան Խաի մէջ՝ հաւանականաբար գալ ամիս :

Լոնտոն 19 յունիս.
Քաղաքական պատճառներով բազմա-թիւ մարդիկ ձերբակալուեցան Օտէմայի մէջ :

Այս առաջը հասած հետեւիք :

Գահիրէ 19 յունիս.
Պ. Վիվիան այսօր մեկնեցաւ Աղէք-սանդրիայէն 'ի Լոնտոն : Գաղղիոյ ընդ-հանուր հիւստիս Պ. Թրքեռու երէկ Խը-տիվին հետ տեսակցեցաւ . կը հաւաստեն թէ հրաժարելու խորհուրդ տուեր է : Գաղղիոյ և Անգլիոյ միջև համաձայնու-թիւնը կը շարունակէ :

Բեդրասուրկ 19 յունիս.
Կորչաքօֆ իշխանն այսօր մեկնեցաւ 'ի Ֆրանքֆորթ և 'ի Պատ :

Փիլիպպէ 18 յունիս
Վերադառնալով խորհուրդն աղգային գինուորութեան մատակարարութիւնը նիւ-թոց վերաբերեալ գայթակղական տուու-տուրի մը վրայ ընտելութիւն հրամայեց : Յանցաւորն ստորին կարգի Ռուս սպայ մ'է ուսական կուսակցութեանն պաշտ-պանեալ :

Լոնտոն 19 յունիս.	
Օտ. Բան.	42
Փոխ.	1865 15 1/2
»	1869 14 1/2
»	1871 51 3/4
»	1872 24 1/2
»	1873 13 1/2
»	Եղիպտ.
»	69
Անգլ. Բան.	97 5/16
Փարիզ 19 յունիս.	
Օտ. Բան.	12,10
Գաղղ. Բան.	5 0/0 32,62 1/2
»	» 35,62 1/2
»	» 5 0/0 117, 7 1/2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Կիրիտի կուսակալ Ֆոթիատէս փաշան չորեքշաբթի օրը Վէհ. Սուլ-թանին ներկայացաւ իւր հրաժեշտը մատուցանելու :

Կիրիտացոց խնդրուածքն ըն-դունուած լինելով, Ֆոթիատէս փա-շան յառաջիկայ շաբթու իւր պաշ-տօնատեղին պիտի ուղևորի :

Վաղթ լրագիրն, որ ամեն օր մէկ մէկ նոր վախառութիւն կերպէ, իւր այս աւուր թուով կը ծանուցա-նէ թէ Օսմանեան կառավարութիւնը Կիպրոսի հաստիքից յաւելուածը 10 տարուան համար Անգլիոյ թողլով՝ Անգլիայէն փոխառութիւն մը պիտի ընէ :

Նոյն լրագիրը կը ծանուցանէ նաև

թէ Կիպրոսի հաստիքից յաւելու-ածին նկատմամբ Անգլիոյ և Բ. Գրան միջև տակաւին համաձայնութիւն չէ գոյացած, և Պիտիլի գնդապե-տըն իւր պաշտօնը չաւարտած մեկ-նած է մայրաքաղաքէն :

Ճիտեղէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Հիւսիսի կուսակալ Հալէթ փաշան մեռեր է յիշեալ քա-ղաքին մէջ :

Հալէթ փաշան Ալիքիլեան Տրի-պոլսոյ, Ալբերտուպոլսոյ և Սերաս-տիոյ կուսակալ եղած և կայսերական դանձուն, առեւտրական գործոց և հասարակային շինութեանց նախա-րարութիւն ըրած, և Աւագաց ժողո-վին անդամ եղած էր :

Յայտնի է թէ խնայողութեան համար կառավարութիւնը ցամաքա-յին և ծովային զօրաց հրամանա-տարներէն բազմաթիւ բարձրաստի-ճան սպայներ պաշտօնէ դուրեցու-ցած է : Թուրք լրագիրը կը ծանու-ցանեն թէ Սպարապետի դրան և ծովային գործոց նախարարութեան պաշտօնատարներէն բազմաթիւ ան-ձինք ալ պաշտօնէ պիտի դադրին, և միւս պաշտօնատարնք բարձրագոյն կարգի պաշտօնատարաց ամսական-ները պիտի նուազին :

Երէկ Պոլսոյ Գիւլիւ. Ս. յա-Սօֆիա թաղը Նաֆի Էֆենտիի ապարանքին մէջ Պ. տը Հիւրի ծախիւք 50ի չափ գաղթական թուրք տղայոց թիւա-տուրութիւնը կատարեցաւ հանդիա-ւոր կերպիւ, և նախարարներէն և Բ. Գրան պաշտօնատարներէն ոմանք ներկայ գտնուեցան :

Վարնայէն կը գրեն թէ յիշեալ քաղաքին մէջ գրուած տեղական գին-ւորաց թիւը 111ի կը հասնի : Ասոնց 98ը Յոյն, 10ը Հայ և միայն 3ը Պուլղար են : Հիւսիսեան հպատակ քանի մ'ե-րիտասարդ Յոյներ բռնաբար զինուո-րագրութեան ենթարկուելու են՝ տ-ւանց ականջ դրուելու Հիւսիսեան հիւպատոսին բողոքանաց :

Ալբերտուպոլսոյ լուր կուտան թէ Ռուսական զօրաց ետեւէն Արեւել-եան Ռումելի գաղթած Պուլղարք իրենց տեղերը կը վերադառնան, ո-րոց ամեն դիւրութիւնը կուտան ե-ղեր տեղական իշխանութիւնը :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	
Է Ա Ն Ա Մ Ը Ո Ւ Մ Ո Ւ Մ Ի Է	
Երէկ իրիկուն գոցուեցաւ	12,36
Այս առաւօտ բացուեցաւ	12,36
Կէս օրին	
12,37	
Բուռն իրիկուն գոցուի	Ֆր. 48,
Թողապարտ	Իր. 1150
ԸՆԹԱՅՐ ԱՐԺԱԹԱՅ	
7 Յունիս	
Սօսիթ է ձեռնարկուած Անգլ. Իր. 4,	
» փոխանակութեան	3,20
Կ. Պոլսոյ Պաշտօնային	6,15
Քրիտի ձեռնարկ	4,15
Փոխ. 1863	Ֆր. 78
» 1865	73
» 1869	69
» 1872	21
» 1873	65
Թրամաւայ	Օտ. Իր. 2 65

ԸՆԹԱՅՐ ԳՐԱՄՈՑ	
8 Յունիս	
Անգլ. Իր. 4	գր. 109 41
Նարոյնի ոսկի	87 48
Խիւսիսի ոսկի	89 35
Գըրմից	51 45
Մէհմետի տարբերութիւն	5 37
Հինգ նոց	44 40
Պրինս	178

Ա. Չ. Ա. ՅԻՆ.

Նը լսեմք թէ Ս. Պատրիարք հայ-ը չորեքշաբթի օրը Մեծ-Եպարքո-սին հետ ունեցած տեսակցութեանը մէջ ինչ ինչ կարեւոր առաջարկու-թիւններ ըրեր է, որոց պատասխա-նը քանի մ'օրէն տալ խոտադէր է Մեծ-Եպարքոսն : Հետեւաբար Ս. Պատրիարքը քանի մ'օրէն վերստին պիտի տեսակցի Ն. Բարձրութեան հետ :

Մեր Մոսկուայի ուսումնական աղ-գայիններէն Պ. Զարմայր Մսերեանց մօտերս շարունակել սկսաւ իւր «Փա-րոս Հայաստանի» պատկերազարդ-հանդիսին հրատարակութիւնն, որ 1872էն ի վեր չորս տարի տեւելով, 1876ին դադարած էր : Պ. Զարմայր Մսերեանցի հանդիսին այս նոր հը-րատարակութիւնը ցարդ ելած թի-ւերէն գերազանց է, և տպագրու-թեան և պատկերաց գեղեցկու-թեամբ և նիւթոց ընտրութեամբն ու առատութեամբն Եւրոպոյ առա-ջին կարգի պատկերազարդ հանդէս-ներուն հետ կրնայ մրցիլ այնպէս որ «Փարոս Հայաստանի» հանդէսը փառք մ'է թէ՛ Հայկական մամուլն՝ որ ցարդ անոր նման պատկերազարդ-գեղեցկի թերթ մը չէր ունեցած, և թէ հեղինակին որ իւր հրատարա-կութեան գերազանցութեանն հա-մար ոչինչ խնայած է :

«Փարոս» ի ներկայ թիւը քառա-ծալ 36 երեսէ կը բաղկանայ, և 27 հատ գեղեցիկ պատկերներ կը պա-րունակէ, որոց մէջ առաւել նշանա-կութեան արժանի են Ամեն. Ներսէս Սրբազանին, Ռուսաց առաջին Աղեք-սանդը կայսեր, Լորիս Մէլիքով կոմ-սին, Շէլլեքովի, ընդ զօրավարին, վախ-ճանեալ Ստեփաննոս Նազարեանցի, Աֆղանստանաց Շիր Ալի Էմիրին, Ի-տալիոյ Թադաւորին, Զուլուներուն և տակաւին շատ մը նշանաւոր ան-ձանց և տեսարանաց պատկերները : Այս վերջիններուն մէջ ալ նշանակու-թեան արժանի են մայրաքաղաքիս քանի մը գեղեցիկ տեսարանները, Պէրլինի վեհաժողովը, փարիզի ար-ւեստահանդէսն և այլն : Պարունակած յօդուածները պատմական բանասի-րական կենսագրական և աղգային օգտակար նիւթերու վրայ են : Միով բանիւ, «Փարոս Հայաստանի» իւր տեսակին մէջ առաջին կարգի գործ մ'է, և իրեն այն՝ մեր աղգայնոց համակրական ընդունելութեան և քաջալերութեան արժանի :

Հանդիսին հրատարակութեան ժամանակները տակաւին որոշուած չլինելով, առայժմ տետր առ տետր կը ծախուի Ներկայ տետրը և ֆրանքի կը ծախուի մայրաքաղաքիս մէջ, և կը գտնուի Պոլսի Ասմա ալթը Բիւրնի-ճիներուն մէջ թիւ 48 Մսերեան Պ. Մերգայի վաճառատունը :

Կը յուսամք որ Պ. Զարմայր Մս-երեանցի գործն արժան եղած ըն-դունելութիւնը կը գտնէ մեր թուր-քիւրնակ աղգայիններէն, որով հե-ղինակն ալ կը քաջալերի առաւել ե-ռանդեամբ շարունակել իւր աղգ-օգուտ ձեռնարկութիւնն և միանգա-մայն կարող կը լինի իւր աշխատու-թիւնն աւելի գիւրամատոյց դնով ներկայայնել հայ հասարակութեան :

Գահութեամբ կը լսեմք թէ Դըպ-րոցապետը Արեւելեան ընկերութիւ-նին իւր Մուշի գաղութէն Ա. տարե-կան յաջողակ պատանի մը Կ. Պոլիս բերել տալով, Եւրոսագէմայ ժառան-գաւորաց վարժարանը զրկեր է ու-սումն աւարտելու :

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Տեղութիւնն փափաքելի ընդ-հանուր եռանդ իմն ուսումնական՝ Հայութեան ամեն դասերն առ հա-սարակ վառած և ոգևորած կերեւի :

Կոտանդնուսպոլսոյ ամենայն թա-գեր մեծ ճգունք կը թափեն զհայ ուսումն ներկայի և ապագայի պա-հանջմանց համեմատ ծաւալելու : Ըն-կերութիւնք օր քան օր կը բազմա-նան՝ հազար բերան Հայութեան ան-հեթեթ կարօտն յաղեցուցանելու, յառնեն և կանայք՝ մեր որդիանի թշուառութեան սև քօղն ուսման աստղերով զարդարելու, մերթ ընդ-մերթ ուսումնադէտ անձինք համա-ռօտ յատակադեր իսկ կը ներկայա-ցնեն ուսման ծաւալման ճանապարհ-հայ և եղանակաց յայտարար, կը բացուին նոր ցորեկօթիկ վարժարանք և հինքն բարգաւաճին, այլ կը մոռ-նայ Հայ ազգն թէ գիշերօթիկ վար-ժարանք իսկ ապագայի պաշտօն հար-կանող ժողովրդեան ամենակարև որ են :

Երբ դաւառաբնակ Հայոց յոյսն յափուեն ծովուց իջեալ իւրեանց գաղթական եղբարց վրոյ եղեալ է, երբ այս յուսատու գաղթական Հա-յոց զօրաւորագոյն մասն ալ Պօլսոյ պէս զՀայ ընդ-օտարաց և ընդ-օտա-րութեան ընտելացնող հողոյ վերայ կը բնակի, պէտք է որ այս գաղթական մարմինն ամեն ճգունք թափէ իւր գոյնն և ոգին իւր ամենայն դասուց մէջ պահելու, որպէս զինքն իւր գա-ւառաբնակ եղբարց խմբովին օգնե-լու սէր ընդհանուր ունենայ, և ապա սոցա տուած հացն 'ի Հայէ առ Հայ արժանաւորապէս նուիրելի Հայ հաց Ասիական հաց լինի :

Այս նպատակին հասնելու հա-մար թաղական վարժարանաց՝ բազ-մութիւնն և բարեբաւումն բաւական չէ, պէտք են և գիշերօթիկ վար-ժարանք :

Կան 'ի Պոլիս արու զաւակաց հա-մար մի քանի գիշերօթիկ վարժա-րանք այսպիսիք, այլ սոքա յոյժ-ուակաւութիւն են :

Թաղական վարժարանք որչափ և բարգաւաճին, որչափ և զամենայն ուսուցանել կարողանան, երբեք գի-շերօթիկ վարժարանաց լրացուցած պաշտօնն լրացան կատարել չեն կա-րող :

Գիշերօթիկ վարժարանաց կարե-ւորութիւնն ոչ այնչափ սոցա ուսումն-նական արգասեաց վերայ՝ կայացեալ է, որչափ ընկերական կենաց այլ և այլ պարագայից ստիպողական պա-հանջմանց վերայ, որով կրնամք ասել թէ որչափ այս կենաց պարագայք կան, այնչափ և գիշերօթիկ վարժա-րանք պարտին հաստատել և մնալ :

Կարօտ են գիշերօթիկ վարժա-րանաց՝ տեսակ տեսակ որբեր, պէս պէս անսպառնալի և փորձանաց վի-ճակի մէջ գտնուող մանկունք, յա-րատե հսկողութեան կարօտ զաւա-կունք, զաղաւթութիւնն և զգործու-նէութիւնն ծնողաց կոպիանդող որ-դիք և դիտաւորապէս ընտիր ընկե-րութեան մէջ իւրեանց զաւակաց ըն-տիր կրթութիւն տալ փափաքող մե-ծամեծք, որոց թիւն բաւական մեծ է 'ի Պոլիս :

Վերջիւնեալ դասուց կարօտացած գիշերօթիկ վարժարանաց 'ի մեզ պա-կասութիւնն մեծ պակասութիւն մի է, որոյ յոյժ տխուր են հետեւեալք :

Ձի 'ի չգոյութենէն այս վարժարանաց ստիպեալ կերպն վերջիւնեալ դասք Հայութեան իւրեանց զաւակունքն օտար գիշերօթիկ վարժարանաց կը յանձնեն, ուր կ'օտարանայ մանկան

